Հայոց Ցեղասպանության Արտացոլումը Հակոբ Օշականի Գործերում

Մարի Ռոզ Աբուսէֆյան
ԱՄՆ

Շուտով ազգովին թեւակոխելու ենք Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցը եւ բավական աշխատանք ունենք այդ արհավիրքը գրականության մեջ արտացոլող ստեղծագործությունները հավաքագրել-ամբողջացնելու, թարգմանելու, ներառյալ նաեւ թուրքերեն, հասարակության ուշադրությանը ներկայացնելու, քանի որ դրանք սոսկ Ցեղասպանությունը ներկայացնող գործեր չեն, այդ ստեղծագործություններում շոշափված են հարցեր, որոնք մինեւ այսօր դեռ լուծում չեն գտել մեր ազգային եւ քաղաքական կյանքում: Թող զարմանալի չթվա, որ մենք կրկին ու կրկին անդրադառնում ենք այս հարցին, փորձում գտնել, ստեղծել, տեսնել հայության ապրած այդ ահավոր ոչնչացումը մեր գրականության մեջ: Դա մեզ պարտադրում է պատմության ընթացքը՝ անցյալը հստակ ճանաչելու, իմաստավորելու մեջ է մեր ապագան:

Մինչեւ օրըս մենք ավելի շատ ուսումնասիրել ենք Ցեղասպանության թողած ազդեցությունը այդ արհավիրքը ապրած գրական այն սերունդի վրա, որը ծանոթ է Անապատի Սերունդ անվանումով, այդ ազդեցության վերարտադրումը նրանց գործերում, դեռ սպասելով Ցեղասպանությունը իր ամբողջ տարողությամբ ներկայացնող ստեղծագործությունների:

Բայց չէ՞ որ Հայոց Ցեղասպանությունը միանգամից՝ 1915թ, չսկսվեց ու գործադրվեց: Այլ ծրագրված, աստիճանաբար իրագործվելով իր վերջնակետը գտավ այդ թվին, 1915ին: Հիմնվելով քաղաքական այս փաստի, արեւմտահայության ծրագրված աստիճանական ոչնչացման, դարերով նրանց ստեղծած բարքերի, կենցաղի,մշակույթի,պատմության կորուստ-ոչնչացման փաստերի վրա, պիտի նշել, որ Հայոց Ցեղասպանությունը իր ակունքից սկսած, արտացոլված է արեւմտահայ գրականության մեջ հանձինս՝ Հակոբ Օշականի ստեղծագործությունների:

Ծնվելով նախաեղեռնյա, եղեռնի սկզբնավորման միջավայրում, ապրելով եղեռնյա՝ վերջնական ջարդերի եւ ետ եղեռնյա ժամանակաշրջաններում, նա ամբողջովին յուրացրել էր արեւմտահայության դժոխային կյանքը թուրքական հային ոչնչացնող տիրապետության տակ եւ ավելի ուշ արդեն աշխարհի ճանապարհներում սփռված, որը եւ փոխադրեց գրականություն: Ինքն անձամբ ապրելով եղեռնի սարսափազդու իրավիճակը, ծրագրել էր նաեւ հայության զանգվածային կոտորածներն ու տեղահանություն-աքսորը, դարձնել իր վեպերի գլուխ գործոց՝ <<Մնացորդացը>>-ի վերջաբանը <<Դժոխք>> վերնագրով: Ոչ միայն երեւակայությունից, մարդկային ըմբռնումից վեր արհավիրք էր ապրել արեւմտահայը, այլեւ բնաջնջվել, ոչնչացվել, արմատախիլ էր եղել, կտրվել իր ծիներին սնուցող ակունքներից եւ նա որպես ստեղծագործող իր պարտքն էր համարում այդ ամենը գրականությամբ արտահայտելու: Հարցն այն էր, ինչպե՞ս գրականություն փոխադրեր այդ բոլորը: Ըստ իրեն՝ *Գիրին ուժը պետք է հավասարեր դեպքին*

մեծության: Իսկ դեպքին մեծությունը՝ Եղեռնը, իր բառերով մեծատառով **Աղէտը**, հայրենի հողի վրա կատարված Ցեղասպանությունը, սովորական բառերի սահմանումից դուրս երեւույթ էր: Օշականից 84 տարի անց, այս նույն միտքը ավելի սուր կերպով արտահայտել է եղեռնի վերապրողներից Նարգիզ Ժամկոչյանի հիշողությունները գրառող գիտնական Վիթալի Յանկոն՝ <<**Այդ Աղէտը կարիք ունի մի նոր լեզվի, գուցէ եւ առանց բառերի**>>-ասել է նա: Ուրեմն զարմանալի չէ, որ Օշականը, ամենաբարդ երեւույթներն անգամ այնքան բնականորեն բառերի վերածողը, չեր կարողանում գտնել այդ **գիրին ուժը**, այն **բառապաշարը**, որն ամբողջ տարողությամբ, վերարտադրեր միլլիոնավոր ժողովրդի տարագրություն, տարածքների բռնագրավում, նրան ոչնչացնելու համար օգտագործված զարհուրելի եղեռնագործություն:
Ճակատագիրը թույլ չտվեց Օշականին իրագործելու իր մեծ երազանքը, նա մահացավ ավելի վաղ քան կգրեր իր մտածած վեպը, սակայն մինչ այդ, նա արդեն հասցրել էր իր ուշ շրջանի պատմվածքներում եւ իր գլխավոր վեպերում նույնպես, արտացոլել հայության դեմ գործված ցեղասպանության զարհուրելի պատկերը:

Հիշեցնեմ, որ Միջազգային Իրավական Օրէնքով Ցեղասպանություն է համարվում **1. Մի ժողովրդի, մարդկային մի խմբի, ծրագրված սպանությունը: 2. Մարմնական եւ հոգեկան վնաս հասցնելը: 3. Դիտավորյալ ծրագրումով նրանց իսպառ ոչնչացումը: 4. Նրանց տարածքների ու ունեցվածքի բռնագրավումը: 5.Բռնի ուժով դավանափոխությունը . .** Եղեռնի վերջնակետից առաջ, Թուրքիան արդեն իրագործում էր հայերի ոչնչացումը նրանց տարածքներին մեկընդմիշտ տիրանալու համար, այսինքն եղեռնը արդեն սկսված էր նախքան 1915թ: Օշականը իր գլխավոր վեպերում արտացոլում էր այդ ժամանակաշրջանը՝ Եղեռնի սկիզբը եւ օգտագործված միջոցները:

Հիշենք նաեւ, որ Աղէտը, ցեղասպանությունն արդեն տեղի էր ունեցել, երբ Օշականը 1920-22 թթ գրում էր իր պատմվածքները եւ 1928-1934թթ վեպերը: Բանտերից, աքսորից, անապատներից վերադարձել էին հրաշքով սակավ փրկվածները ու գրառել իրենց ապրած զարհուրանքը: Օշականը տեղյակ էր եղեռնի բոլոր մանրամասներին, ինքն էլ դեռ այդ սարսափի ազդեցության տակ էր, բնականաբար ինչ էլ գրեր, իր էության, իր մտքի, իր խոսքերով՝ <<ինչպէս սաղմին վրա>>, իր ենթագիտակցության մեջ արմատացած այդ անջնջելի աղետն էր ներկայացնելու: Չէ՞ որ ըստ հոգեբանների, մարդկային ենթագիտակցության մեջ դաջվում են նրանց ապրած զարհուրելի փորձությունները եւ անգիտակցորեն վերարտադրվում իրենց գործերում: Պատահական չէ, որ նա ձեռնամուխ եղավ թուրքին հայ գրականության մեջ ներկայացնելուն: Դրանով հայի ուշադրությունը նա կենտրոնացրեց իր երկրին, իր հոգուն, իր մտածողությանը տիրացած ու իրեն բնաջնջած ցեղի, թուրք հասկացողության վրա, պարզաբանելով, թէ **ինչ՞ու գործադրվեց եղեռնը, ի՞նչն էր մեզ բնաջնջելու թուրքերի նպատակը եւ ինչպե՞ս իրագործվեց այն:**
Եղեռնի մասին առաջին անգամ հանդիպում ենք, 1920թ. Պոլսո ´´Ճակատամարտ´´ օրաթերթում պարբերաբար հրատարակված իր պատմվածաշարում:

Ուշագրավ խորագրով պատմվածաշարը՝ ՛՛ *Կայսերական Հաղթերգություն*՛՛, ընդգրկում է հինգ փոքրիկ պատմվածք, ուր պատկերվում է հայության ապրած մեծագույն ողբերգությունից՝ Եղեռնից, դրվագներ, այդ եղեռնագործության հոգեբանական հետեւանքներն ու ազդեցությունը կենդանի մնացողների վրա:

Առաջին անգամ Օշականն է, մեր գրականության մեջ, այս պատմվածաշարում, խոսում Ցեղասպանության կազմակերպման մեջ գերմանիո մասնակցության մասին: Պատմվածաշարի առաջաբանում նա մեղադրում Գերմանիային, հատկապես Վիլհելմ II կայսրին: Արդեն շնորհազրկված կայսրին, հեղինակը հիշեցնում է փառքի օրերին նրա գործած ամենամեծ ոճիրը՝ Հայոց Ցեղասպանությանը մասնակից դառնալը, այն **<<անպարագրելի , մեր մտքերուն սահմաններէն դուրս մնացող ոճիրը>>** համատարած աքսորն ու անպաշտպան հայության գազանբար հոշոտումը , գերման հսկիչների անմիջական ու անտարբեր հսկողությամբ: Թեեւ այդ ոճիրները նա համարում է միայն **<<ավազին հատիկ մը կայսրին ետին թողած արյան պատմության մեջ**>>[2]: Կայսրից բացի նա դատապարտում է նաեւ գերման ժողովրդին, նրա ցուցաբերած անտարբեր լռության համար՝ <<**քու վրայէդ իջնալու համար քու ցեղիդ, որ հանդուրժեց-չըսելու համար փառաբանեց –ոճիրներուն ամէնեն անորակելին**>>[3]

Նույն պատմվածքաշարի՝՛՛ *Արծիվները* ՛՛եւ՛՛ *Վրդոված Խղճմտանք* ՛՛-ում ամայացած հայրենի երկրի ողբերգությունն է: Գիշատիչ արծիվները, որոնք այլաբանորեն թուրք մարդակեր խուժանն են, բզկտում, ոչնչացնում են, դարերով հայ ազգի հավաքագրած հարստությունները՝ ինչքերը, իղձերը, երազները, իրենց գիշատիչի արյունակեր բնազդներով ոչնչացնելով ամեն ինչ, տիրաբար տարածվում են հայկական դարավոր հողերի վրա: Եւ թէ ինչպես լեռների մեջ ծվարած փոքրիկ հայ գյուղի բնակիչները հավատարիմ իրենց հավատքին լուռ ու մունջ մորթվում են:

Ընդամենը մի քանի էջանոց՛՛ *Տանտանը* ՛՛պատմվածքում մեր առջեւ կենդանանում է եղեռնից անմիջական մի տեսարան: Հինգ տարեկան մանուկը մարդկային սպանդի խուճապահար փախուստի հոսանքում կորցնում է մորը, տեսնում է կապկպված ձեռքերով հոր բռնի հեռացումը, քույրերի առեւանգումը, եղբայրների մահը ճամփաներում ձգված եւ միայնակ արյան ու կոտորածի միջով խելակորույս քայլում է մահվան քարավանով: Հետո հիշում է, դիակների մեջ սարսափահար իր լացը, երբ մի թուրք ծերունի փրկում է նրան ու բերում Պոլիս: Թուրքի տանը, անգիտակցորեն թրքացած, իր համար ատելի ու խորթ այդ միջավայրում, միայնակ ու լուռ իր փոքրիկ մանկական հիշողություններով է ապրում նա: Ամբողջ օրը մտքով իրենց գյուղում է, իրենց տանը, իր եղբայրների ու քույրերի հետ խաղալիս: Թեեւ փրկված է, գլխին մազի փոխարեն մի մեծ սպի ունի ու մի կոտրած տիկնիկ ձեռքին, երջանիկ չէ: Նա ատելությամբ է կատարում ծառայի իր պարտականությունը՝ տան երեխային հոգ տանելը, իր մեջքին դնելով պտտեցնելը: Ինքն ընդամենը հինգ տարեկան է, ամբողջ օրը լուռ է, մտքով անվերջ իրենց տանը,

1.2,3 ”Կայսերական Հաղթերգություն”, էջ10

իսկ այդ երեխան իր ճչացող լացով խանգարում է իրեն սիրելի հիշատակների վայելքը

ապրելու: Անգամներ մտածում է նրա կոկորդից պոկել ձայնի լեզվակը, որ լռեցնե նրան հավիտյան: Օշականն այստեղ խորը ստեղծագործողից դառնում է խորը հոգեբան-հետազոտող, հաստատելով այսօրվա նյարդագետների այն տեսությունը, որ վաղ մանկության մեջ հոգեկան զարհուրելի ցնցումներ ապրածների ենթագիտակցության մեջ դաջվում են այդ տեսարանները, որոնց ՝՝մասունք պատկերներ՝՝ են անվանում, ՝՝iconic images՝՝ եւ որոնք հաճախակի գլուխ են բարձրացնում արթնացնելով իրենց ապրած ցնցումը: Հիշեցնեմ, որ Օշականը առաջինն էր, որ այս հարցին անդրադարձել է եղեռնից անմիջապես հետո, որը ավելի ուշ հոգեբանների հետազոտության առանձին ճյուղ պիտի դառնար:
Եւ մանուկն իր մեջքից ատելությամբ նետում է մարդասպանների այդ լացող շառավղին եւ տարվում իր մեջ արթնացող եղբոր՝ պճլիկ Թումասի հուշով, որը <<**չորցավ ճամփուն տաքերէն ու ձգուեցավ ծառի մը շուքին**>>[1] : Եւ մի օր դարբասի դուռը բաց գտնելով դուրս է գալիս փողոց, ինքնամոռաց քայլելու պահին լսում է հայկական եկեղեցվո զանգերի ձայնը, որն իր մեջ արթնացնում է իր կորցրած կյանքը: Այդ ձայնին հետեւելով հասնում է եկեղեցի, կարողանում է միայն ասել, որ հայ է, եւ *տանտանի,* մանկական լեզվով՝՝զանգակի՝՝, ձայնն է իրեն բերել այնտեղ:
Այս փոքրիկ, հոգեբանական խորը պատմվածքով Օշականը ոչ միայն իրական եղեռնից հատված էր ներկայացնում, այլ նաեւ փորձում էր այդ զանգակի ձայնով ետ հավաքագրել հայության հավատափոխ եղած, փրկված հատվածին:
՝՝*Վրէժը*՝՝պատմվածքում նույնպես կոտորածի պատկերն է: Յուրայինների դիակների միջից հանկարծ մի մանուկ վիրավոր, ճեղքված գլխով, միայնակ, հազիվ ոտքի կանգնելով, դեռ ուշքի չեկած, իր ուժը չվերագտած, խեղդում է թուրք մանկանը: Այս այլաբանորեն գրված պատմվածքում, ոտքի կանգնող մանուկը խորհրդանշում էր եղեռնից անմիջապես հետո, անօգնական ու միայնակ, աշխարհից մերժված հայության հաշվեհարդարը Ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից:
Պատմվածաշարը ամփոփող վերջին պատմվածքում թուրքերի իրենց գործած ցեղասպանության կոծկումն ու ուրացումն է, որը ներկայացնում է գայլի ու գառների այլաբանական փոխհարաբերությամբ: Եւ հեղինակի հարցումն այն է, թե <<**աշխարհ պիտի հաւատայ՞**>> նրանց այդ սուտին:

Եղեռնը ազդարարող, եղեռնը կազմակերպողներին աստիճանաբար բացահայտող եւ անուղղակիորեն Ցեղասպանությունը արտացոլող խորը գործեր են ՝՝Հարյուր մեկ տարվան եռագրության՝՝ վեպերը՝՝*Հաճի Մուրատ՝՝, ՝՝Հաճի Ապտուլլահ՝՝, ՝՝Սուլեյման էֆենտի՝՝, ինչպես նաեւ իր գլուխգործոց՝՝Մնացորդացը՝՝:*
Այս վեպերում ստեղծած իրավիճակների, անհատական կերպարների զարգացման, նրանց գործողության ու ճակատագրի մեջ Օշականը տեղադրել է այնպիսի զուգորդումներ, որոնք ընթերցողին անմիջապես փոխադրում են եղեռնի միջավայրը: Վեպի ամբողջ տարածքում հայերի դեմ տարվող հալածանքներում, հայության

1. Տանտանը, էջ 37

դեմ կատարված ոտնաձգումներում պարզորեն նկատելի է հային սպառնացող մեծ արհավիրքը: Վեպի հերոսը՝ Հաճի Մուրատը, բնազդորեն զգում է իր ազգին սպառնացող վտանգը, **<<որ զարնելու էր արմատը իր ցեղին>>**, եւ դրա համար նա ազատ է արձակում իր խմբի հայ ասպատակներին, որովհետեւ՝ **<<Ամեն տղայ պետք է իր տունին: Սեւ օրերը ճամբայ էին ինկած>>**: [1] Սեւ օրերը եղեռնի ազդարարումն էր:

Վեպում՝ Մուրատի վրա գործադրված տանջանքներում, բանտի տանջարանում, Պրուսայի դիվանապետի գործողություններում, ամենուրեք եղեռնի պատկերն է, որոնք մեզ անմիջականորեն կապում են եղեռնին:

Ահա Մուրատին տանջելու տեսարանից մի հատված՝ **<<Թեւերը կոնակի վրա իրարու կարելով, մեկիկ-մեկիկ տաքցուած աքցանով եղունգները ոտքէն ու ձեռքէն փրցուցին, փորին վրայ մաղ-մաղ մոխիր փռեցին ու կոնակի ակօսին մէջ կարմրած շամփուր դարձուցին>>**[2]

Սա դեռ մի դրվագ էր եղեռնի ժամանակ հարյուր հազարավորների դեմ գործադրված նույնատիպ եւ ավելի ահարկու չարչարանքներից: Այս նույնատիպ գազանության նկարագրությանը մենք հանդիպելու ենք եւ՝ Արմին Վեգների, ֆրանսացի միսիոներ Հայր Բէնուայի, վերապրողներից Ա. Անտոնեանի, Շամտաճեանի, Թէոդիկի եւ այլոց գրառումներում: Իսկ քարայրում, թուրք դիվանապետի սառնասրտորեն գործադրած գազանային հաշվեհարդարը, Մուրատին խոշտանգելը, ակնթարթի մեջ կենդանացնում է ջարդի պատկերը Տեր էլ -Զորի ճանապարհին քարայրներում ու ձորերում կիռարկված: **<<Դիվանապետը իր իսկ ձեռքովը թոցուց կէսը կապելային սեռական անդամին՝ զգոյշ ու խոնարհ: Ու լրացնելու համար իր թրքությունը, փրցուած կտորը թխմեց անոր կուղպ բերանեն ներս, դանակ սրցնելիք պողպատ սլաքով մը անոր ծնոտները փարչատելէ ետքը>>** :[3]

Ի տարբերություն հասարակ ժողովրդի, լինելով ժամանակի առաջադեմ մտածող, հասկանալով եղեռնի կազմակերպման նպատակը, վեպում նա մինչեւ իսկ շոշափում է մեծ տերությունների քմահաճույքին հանձնված հայության ճակատագիրը եւ քննադատում, մեղադրում է այն պետություններին, մասնավորապես Եվրոպային, որոնք իրենց մասնակցությունն ունեցան եւ անտարբեր սառնությամբ հետեւեցին կատարվող գազանություններին:

<<Մեր աղետին ամենէն գարշ տրտմութիւնը բռնադատուեցաւ մեզի քրիստոսանուէր այդ մարդերէն>>[4]

Մեր ջարդերում իրենց նշանակալից դերը ունեցած Մոլլաներին է ներկայացնում *՝՝Հաճի Ապտուլլահ՝՝* վեպով, որոնք իրենց փաթթոցների իշխող հեղինակությամբ բորբոքեցին թուրք հասարակ,տգետ ամբոխի կրոնամոլությունը, սովորական դրացիից նրանց փոխակերպելով վայրագ հայասպանների:

1. ‘’Հաճի Մուրատ՝՝. էջ 371
2. ՝՝Հաճի Մուրատ՝՝ էջ 404
3. ՝՝Հաճի Մուրատ՝՝էջ 397
4. ‘’Հաճի Մուրատ՝՝ էջ 406

Ընթերցողի աչքի առջեւ Մոլլայի ամենօրյա քարոզների տակ

կերպարանափոխվող Ապտուլլահի կերպարում տեսնում ենք տարագրության ճանապարհներին մեր ժողովրդին հոշոտած բնաձին ոճրագործներից մեկին: Ապտուլլահը եւ Մոլլան փայլուն ներկայացուցիչն են ոչ միայն իրենց ժողովրդի եւ ժամանակաշրջանի, այլ նաեւ մեր ջարդերին մասնակցողների:

Հաջորդ՝ ՛՛*Սուլէյման էֆէնտի*՛՛ վեպով Օշականն արդեն ամբողջացնում է ոչ միայն թուրքի հոգեբանությունն ու ցեղային ոճրագործ-բնաձին հատկանիշները, այլ այն սերնդի պատկերը, որոնք կազմակերպելու, գլխավորելու, իրագործելու էին մեր ջարդերը, որոնք Երիտթուրք անունն էին կրելու:

Վեպի առանցքը թեեւ ի ծնե ոճրագործ, ճարպիկ մարդասպան ավազակ քել Էտհեմի կյանքն է, բայց այն ներառում է նաեւ կայսրության իշխող համակարգի բոլոր խավերին եւ հատկապես նրանց, ովքեր մասնավոր դեր էին խաղալու մեր ջարդերում՝ մոլլաները, կրոնապետները, կուսակալները, զինվորականները, օրենսդիր եւ ոստիկանական ողջ կազմը:

Էտհէմի նկուղներն ու գաղտնարան-տանջարանները հիշեցնում են այն բանտերն ու զնդանները, ուր տանջամահ էին անում հայ գործիչներին: Իսկ երիտասարդ կանանց ու աղջիկների լլկումները, բռնաբարումներն ու սպանությունները կրկնօրինակն ու հիշեցումն են եղեռնում հայ կանանց ու աղջիկների վրա գործադրվող գազանությունների: **<<Բոլորովին յամառները կապուեցան մարմար սիւներու, մերկացուեցան իրենց զգեստներէն, մսագործի դանակներով քրիկ-քրիկ ձգուեցան կիսավայրի մարդոց կիրքերուն>>**:[1]
Իսկ Էտհեմի՝ իր իսկ ձեռքով, իր կնոջ՝ Սերվինազ հանըմի, լլկելու տեսարանը իրական պատկերն է 1915-ի հայ կանանց կրած լլկումների ու խոշտանգումների: Նույնատիպ ոճրագործների ոհմակներին հանձնված գազանություններով ոչնչացան հայության նշանավոր դեմքերը, ոչնչացավ միլիոնավոր ժողովուրդ:

՛՛Մայրիներու շուքին տակ՛՛ Բ. Թասչյանի հետ հարցազրույց-գրքում, Օշականը ինքն է հաստատում, որ **՛՛Մնացորդացը՛՛ վէպին երկրորդ մասով նպատակ ունի տալ մեր վերջին աղետը՝ տարագրությունը, հետեւելով շէն քաղաքի մը բնակչության, իր տունէն մինչեւ հեռավոր պողոտաները աւազներուն, կրելու համար ազգերու ամէնէն մեծ ոճիրը իր մտքին՝ ինչպէս սաղմին վրա: Երկրորդ հատորով կը սկսի արեան ճամբան>>**: [2] Մինչեւ օրըս այս վեպը համարվում է կիսավարտ, քանի որ վիպասանը չկարողացավ իրագործել իր ծրագիրը՝ Եղեռնը ամբողջությամբ վերարտադրող վեպով ավարտել այն, սակայն իր իսկ հայտարարությամբ՝ **<<Վէպին գրեթէ կէսը նուիրուած պիտի ըլլայ վերջին Եղեռնին>>**:[3] Եւ է, եւ վեպը իր գործողությամբ ամբողջացված, ավարտված է:

1 ’Սուլէյման էֆէնտի՛՛ էջ 113
2՛՛Մայրիներու շուքին տակ՛՛ էջ 15
3՛՛Մայրիներու շուքին տակ.՛՛էջ 19

Այս վեպը Ցեղասպանությունը իր սկզբնավորումից, իր ակունքից արտացոլող մի մեծ համանվագ է, ուր տեսանելի է ե՛ւ եղեռնի ողջ ծրագիրը, ե՛ւ խելահեղ արագությամբ

դրա իրագործումը: Տեսանելի է հայերի քաղաքական տհասությունը, կուրությունը, չտեսնելու մոտեցող արհավիրքը, մինչեւ իսկ, երբ թուրքերն արդեն բայահայտ էին գործում: Տեսանելի է հայերի ավանդույթների անկման համար թուրքերի տարած հետեւողական աշխատանքը եւ այդ անկումը, որը տանում էր հայ ազգին դեպի ոչնչացում: Տեսանելի է հայ հոգեւորականության բարոյազրկմամբ համայնքն ամբողջովին քայքայող թուրքերի հաղթանակը: Տեսանելի է թուրքերի իրենց մեծ ծրագրին՝ համաիսլամացման, հասնելու ակընդետ համառ աշխատանքը:

Վեպի վերնագիրն ինքնին մեզ կապում է Ցեղասպանության հետ: Ինչ որ փրկվեց, կենդանի մնաց այդ արհավիրքից, ազգի Մնացորդացը:

Վեպում օգտագործված մի շարք պատկերներ, բացահայտորեն վերցված են եղեռնից, ինչպիսին Սողոմի կախարդիչ երգն է բանտում: Դա անմիջականորեն Չանղըրըի բանտում Կոմիտասի վերջին պատարագի կրկնօրինակումն է, որն Օշականը լսել էր նույն բանտից փրկված Բ. Պոզաճեանից, եւ այդ պամությունից տպավորված որոշել էր առանձին վեպ գրել այդ մասին, բայց մինչ այդ այն ներառել էր իր այս վեպում:

Ցեղասպանություն է նաեւ հասարակական-բարոյական հարաբերությունների բռնի ոչնչացումը, որը պատկերավոր արտահայտված է այս վեպում, ուր Նալպանտենց գերդաստանի կյանքով տեսանելի է հայի, որպես ազգ իր հողի վրա կյանքը շարունակողի, ոչնչացումը, մեր բարքերի եւ ավանդույթների փչացումը թուրքերի անմիջական աշխատանքով: Հայը միայն գլուխը իր ուսերին պահելու մտահոգությամբ տարված չի նկատում իր քայքայումը, իր բարոյազրկումը, չի հոտառում մոտեցող մեծ արհավիրքը: Ահա թե ինչու եղեռնի հարվածը հանկարծակի ընդունելով նա մեղավորներ է փնտրում իր ազգի մեջ եւ բնականորեն առաջին թիրախը դառնում են թուրքին չինազանդվողները՝ հեղափոխականները, համարձակ մտավորականները, մինչեւ իսկ մեր հեղափոխական կուսակցությունը: Սա անշուշտ բնական երեւույթ էր դարերով օտարին հպատակվողների, գերության, հոգու շղթաներ կրողների, բնաջնջվողների հոգեբանության համար: Օշականը մինչեւ իսկ այդ հարցին է անդրադառնում՝ << **Վատ ու անանուն բան է մեզ մեղադրել մեր մորթուելուն իբր դրդապատճառ**>> եւ այդ իսկ միտումով վեպում երկխոսություն է ստեղծում հեղափոխական Մաթիկ Մելիքխանյանցի եւ թուրք փաշայի միջեւ ուր բերանով բացահայտում է հայերի տարածքը ամեն գնով իրենցը դարձնելու նրանց վճռականությունը: <<**Մենք մեր հայրենիքին մէկ փշուրն ալ վճռած ենք չզիջել ուրիշին**>>[1] հայտարարում է փաշան: Սա է թուրքի համոզմունք-վերջնագիրը: Իրենց այդ ծրագրին դեմ կանգնողներին, թուրքերը հռչակում էին դավաճաններ, հեղափոխականներ, խռովարարներ, որպեսզի դաժան հաշվեհարդար տեսնելով նրանց հետ, սանձեն հասարակ ժողովրդի արթնացումը: Հաճախ էլ ամենասովորական մարդիկ էին այդ պիտակով բանտ նետվում ու տանջանքների ենթարկվում, ինչպես Սողոմը: Այդ ստահոտ բանաձեւումներով աշխարհի առաջ իրենց գործած ցեղասպանությունը արդարացնող եղեռնի իրագործողներին ենք տեսնում երկխոսության մեջ, որն անշուշտ ավարտվում է Մաթիկի տանջամահությամբ եւ որին պարտադրաբար ականատես են դարձնում մի այլ հայ

զոհի, Սողոմին: Այս հատվածն էլ կրկնությունն է եղեռնի ժամանակ հարազատների աչքերի առաջ մորթոտած, կտտանքների ենթարկած մեր հեղափոխական գործիչների, մեր չնկճվող մտավորականության եւ միլիոնավոր հայության կրած չարչարանքների:
1.''Մնացորդացը՞՞ էջ 237

Ցեղասպանությունը միայն ազգին ֆիզիկապես ոչնչացնելը չէ, այլ ենթարկված տանջանքների՝ գազանային սպանության, բռնաբարության, նվաստացման, ճնշման հետեւանքով ստացած հոգեկան եւ մտային վնասները, ազգային դիմագծի խեղաթյուրումն է տվյալ ժողովրդի մեջ: Օշականը վեպում նկարագրում է նաեւ հայության մեջ այդ երեւոյթները՝ թուրքերի օգտին աշխատելը, նրանց կողմից հայը-հային մատնելու համար նշանակված լրտեսները, որոնցից մեկն էլ արվամոլ Նալպանտենց Սերոբն է, որը մատնում է Սողոմին, կամ Նիկիո շրջանի հոգեւոր առաջնորդը, որը մատնում է Մաթիկ Մելիքխանյանցին:
Վիպասանը անդրադառնում է մեր ամենացավոտ, նույնիսկ ինքներս մեզնից մինչեւ օրըս թագցրած մեկ այլ երեւույթին՝ հավատափոխությանը: Դարեր շարունակ համիսլամությունը տարածելու ամենահեշտ միջոցը թուրքերի համար եղել է զոհին բռնի կամ մահվան ծուղակը ընկած, թրքացումը պարտադրելը, ինչպես վեպում Սողոմի թրքացումն է: Թուրքերի բազմանալը եւ տիրելը արեւելքում այդ բռնի հավատափոխության հետեւանքն է, որը Օշականն էլ է հաստատում՝ <<**Թուրքերուն այժմու աւազները անդրկասպեան երկիրներէն չեկան: Հոս էին անոնք ի սկզբանէ: Տաճկցան ու խաւարեցան իրենց ժողովուրդէն**>>:[1] Մինչդեռ հայությունը իր հավատին ամուր կառչած, արհամարել, մերժել է ընդունել ոչ միայն հավատափոխներին այլ նաեւ բռնաբարությունների հետեւանքով, կամ թուրքերի մերձեցումից ծնվածներին, որի ներկայացուցիչը վեպում Ղազել-Եղնիկն է, որոնց թուրքերը օգտագործել են հայի դեմ, ինչպես վեպում է, եւ որոնց մասին երբեք չենք խոսել, քննության հարց չենք դարձրել:
Վեպի վերջաբանը թուրքերի համար եղեռնի հաղթանակի ցնծությունն է հիշեցնում, երբ Սողոմի տաճկացումը ամբոխը տոնակատարությամբ է ընդունում: Մեռնում է հայը, ցնծում, հզորանում է տաճկացումը: Այստեղ ավարտվում է վեպը, ավարտվում է եղեռնը:

Այսօր Օշականի այս գործերի շնորհիվ է, որ մեր գրականության մեջ, որպես բարձրագույն ստեղծագործություններ, ունենք մեր ժողորդի ապրած ամենամեծ ողբերգության պատկերը եւ դրա թողած հոգեբանական ազդեցությունը մեր վրա:

Ունենք այդ հարվածից ստացած մի շարք անլուծելի հարցեր, որոնք առաջին անգամ այս մեծ մտածողը բացահայտեց եւ մեր ուշադրությանը ներկայացրեց, բայց որը մինչեւ օրս անտարբերության ենք մատնել: Եղեռնը շուտով թեւակոխելու է իր 100-ամյա տարելիցը եւ մենք դեռ թերանում ենք ձեռք մեկնել հայության հավատափոխ եղած հատվածին, միչեւ իսկ այն դեպքում, երբ բռնի

1. Մնացորդացը՞՞ էջ 101

հավատափոխները, իրենք են արթնացել, իրենց լռությունը խզել ու մեր օգնությանն

են սպասում: Երբեք քննության հարց չենք դարձնում բռնաբարությունների կամ թուրքերի մերձեցումից ծնվածների հարցը: Չէ՞ որ այն գոյություն ունի եւ կարեւոր է մեր ազգի թվի եւ մեր հետագա պահանջների համար

Դեռ նույնիսկ պետական օրինագիծ չենք դարձնում մեր պահանջատիրության հարցը: Բայց չէ՞ որ յուրաքանչյուր այսպիսի գիտաժովների միջոցով են պահպանվում, մասսայականում, ազգային, գիտության, երկրի առաջընթացի, մարդկության առաջընթացի հարցերը: Հուսանք, որ այս գիտաժողովը ճանապարհ կը հարթի մեր առջեւ ծառացած դեռ լուծման սպասող բազում հարցերին:

Սան Ֆրանսիսկո 2013թ